

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԱՂԹԱՆԶԸ

ԲԱՆ ԼԴ

(Հատված)

Վերստին յաշուած
կրկին հեծութեան նորին հսկողի
առ նոյն աղերս մաղթանաց բանի:

Աղաչեմ վանփոփոխելի տէրութիւնդ ամենապօր Հոգւոյ հւօրի, առաքեալ լցօղ քաղցրութեան քոյ, և բարեգործեալ ի յանձին և իշխանական աւղման զգայութեան զամենալից շնորհս բաւմապարգև քո ողորմութեան: Եւ հերկեալ զբնական անդաստան մարմնեղէն կարծրացեալ սրտիս՝ լընդունակութիւն արգասեաց հոգևոր սեղմանդ: Բու՛մ ամենիմաստ հոլութեանդ խոստովանիմք զամենայն պարգևս ի մեզ ծաղկեալ և աճեցեալ. որ ձեռնադրես առաքեալս, լցուցանես մարգարէս, ուսուցանես վարդաւէտս, բարբառեցուցանես համբոս, և բանաս զփակեալ ակաճս խից. որպէս աւգակիցն քո էակիցն Հօր անդրանիկն Որդի թոյին գործակցութեամբ ներգործելով զայս ամենայն, քարոզեաց զքեզ Աստուած հաւասարակից խսկութեանդ Հօր: Ենորհեա և ինձ մեղաւորիս խօսել համարձակութեամբ զկենդանարար խորհուրդ աւետեաց Աւետարանիդ, հետեւել արագաթափչ ընթացիւք մտաց ընդ անհուն ասպարէզս քոյինաշունչ Կտակարանաց: Եւ ի մատչել իմ ի գլուխ հանդիսի մեկնութեան բանի՝ նախաժամանացէ առ իս գթութիւն քո, խօսելով յիս վարժանն ու զպիտանիսն և զհաճոյսն քո ի ժամանակի, ի փառս և ի գովեստ աստուածութեանդ քո, և ի լրութիւն շինութեան Կաթողիկէ Եկեղեցւոյ: Եւ կարկառեալ ի վերայ իմ զամենամեծ աջ քո, և զօրացո զիս շնորհօք գթութեանդ քո փարատեալ ի մտաց իմոց ցմէգ մթութեան մոռացութեան, ապաքինեալ ընդ նմին վիաւար մեղաց, ամբառնալ ուշիւ իմաստիցս՝ ի զննցադոյս երկրէ ի բարձունս: Լուսաւորեալ ի յիս վերստին զծագումն անստուեր հրաշքից գիտութեան աստուածութեան քոյ, հւօր, արժանի լինել առնել և ուսուցանել յօրինակ բարեաց աստուածասէր լսողաց: Եւ քեզ ամենայն փառք յամենայնի ընդ Հօր ամենակալի և ընդ Որդւոյ Միածնի և բարերարի, այժմ և յանվախճան յաւիտեանս:

(Գրիգորի Նարեկայ վանից վանականի
«Ողբերգութիւն», Վենետիկ, Ս. Ղալար,
1844, էջ 199—201):

ԲԱՆ ԼԴ

(Հատված)

Նոր հավելված
վերստին հեծութեան
նույն հսկողին,
աղերսական մաղթանքի միևնույն նպատակով:

Կաղաչեմ հւօր Հոգիդ անփոփոխելի և ամենապօր տէրութիւնդ, որկե՛ք քաղցրութեան ցոլը, ու զգացումներու ինքնիշխան աւղումներուն և հոգիս մեզ արդյունավորե՛ք Բու բաւմապարգև ողորմութեանդ ամենալից շնորհները. ու հերկե՛ք սրտիս մարմնեղէն անդաստանը, կարենալու համար ընդունիլ հոգևոր սերմիդ արգասիքը: Խոստովանիմք թե մեր մեջը ծաղկած ու աճած բոլոր զարգանքեր գործն են՝ Բու ամենիմաստ հոլութեանդ, որ առաքելներ կձեռնադրես, մարգարէներ կ'լցնես, վարդաւէտներ կ'ուսուցանես, համբերել կ'խոսեցնես, խուլերուն վաւկած ականջները կբանաս, ինչպէս որ Բու աւգակիցիդ, Հորը էակից անդրանիկ Որդին, Բու գործակցութեամբ այս ամենը ընելով Հորդ խսկութեան հավասարակից Աստուած քարոզեց զԲեզ: Ենորհե՛ք մեղավորիս ևս՝ համարձակութեամբ խոսիլ Ավետարանիդ կենդանարար խորհուրդը, և մտքի արագաթափչ ընթացքով կտրել անցնիլ Բու շունչովդ գրված Կտակարաններու անհուն ասպարէզէն. ու երբ մոտենամ խոսքիդ մեկնութեան կետին, թող նախ ինձի հասնի Բու գթութիւնդ, ու իմ մեջս խոսի Բու աստվածութեանդ փառքին ու գովեստին համար, և ի՛նչ որ հաճո է Բեզի՝ ընդհանուր Եկեղեցւոյ լրութեան ու շինութեանը համար: Իմ վրա կարկառե՛ք ամենամեծ Աջդ, ու զօրացուր զիս գթութեանդ շնորհներովդ. փարատե՛ք մտքես մոռացկոտ մթութեան մեզը, նույն ատեն բուժելով նաև մեղքին խավարը, որպէսզի կարենամ իմացականութեանս ուղբովը բարձրանալ այս երկրավոր կենցաղէն. վերստին լուսավորել իմ մեջս Բու աստվածութեանդ գիտութեան հրաշքներուն անսովոր ծաղումը, Հւօր, որպէսզի արժանի ըլլամ բարի օրինակ ընծայել և սորվեցնել աստվածասէր ունկնդիրներուն: Ու Բեզի ամեն փառք, ամեն ատեն, ամենակալ Հորը և Միածնի ու բարերար Որդիդ հետ, այժմ և անվախճան հավիտյաններ:

(«Նարեկ», աղոթամատյան Ս. Գրիգոր
Նարեկացւոյ, թրգմ. Թորգոմ Եպիսկոպոս,
Կահիրե, 1926, էջ 112—113):

